ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1959 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Է. Ն. Մկրտչյան

ՄԻ ԷՋ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ինչպես հայտնի է Մոսկվայում 1882 թ. կազմակերպված Հայրենասերների միությունը ունեցել է իր «Ազատության ավետաբեր»՝ օրգանը և տպարանը՝ «Ազատ տպարան Հ. Մ.»։ Այս կազմակերպության անդամները, որոնք հայեր են եղել, նպատակ են դրել օգնելու արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարին։ Մատենադարանում պահպանվում է «Ազատության ավետաբեր» հանդեսի 1884 թ. № 4-ը։

«Ազատության ավետաբեր»-ի № 4-ի նյութերը որոշակի ցույց են տալիս Հայրենասերների միության դաղտնի կազմակերպության ազատագրական նպատակները։ Մեծանուն բանաստեղծ Ռ. Պատկանյանի երկու անտիպ բանաստեղծությունները, որոնք նվիրված են եղել Կարինի 400 բանտարկյալներին, առաջին անգամ տպագրվում են այդտեղ։ Այդ բանաստեղծությունները երկար ժամանակ ժողովրդի մեջ տարածվել են ձեռագիր ընդօրինակություններով, որովհետև ցարական գրաքննությունը արգելել էր այն տպագրելու։ Ահա այս մասին ինչ է գրում «Ազատության ավետաբեր»-ի հոդվածագիրը. «Կարնո անցքերի ժամանակ, ինչպես և հիմա, ուրիշ քամի է փչում... և ցենզուրան արգելեց հիշյալ ոտանավորները... հարկավոր ենք համարում մեր ձեռքին գտնված օրինակները հրատարակել հեղափոխական ազատ մամուլի մեջ»։ Միայն տասը տարի անցնելուց հետո՝ 1893 թ. Պետերբուրգում լույս տեսած ժողովածուի մեջ մտնում են նաև այս բանաստեղծությունները, այն էլ կիսով չափ կրճատված։

Թերթը խիստ գաղտնի է պահել կազմակերպության անդամների անունները և նրանց գործունեությունը։ Այս առթիվ հոդվածագիրը գրում է. «Ցավում ենք, որ «Մեղու»-ի և «Մշակ»-ի մեջ չենք կարող հրատարակել «Հ. Մ.» անդամների անունները, նույնպես և այն գործերը, որոնք ձեռնարկում ենք»։

Մեր տրամադրության տակ է «Ազատության ավետաբեր»-ի 1884 թ. № 4-ը։ Այս թերթը լույս է տեսել գաղտնի և ունեցել է իր համակրողները՝ Պետերբուրգում, Բաքվում, Գերմանիայում և այլուր։ Թերթը՝ համակրանքով է խոսում Հունաստանի, Իտալիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Ռումինիայի ազատագրական շարժումների մասին։

Ներկայացնում ենք Հայաստանում եղած այդ միակ ունիկում օրինակի նյութերի ցանկը, որը վրիպել է մեր բանասերների ուշադրությունից։

«Ազատության ավետաբեր», Մոսկվա, 1884 թ., № 4, փետրվար, էջ 1—8։

1. Տեռորի դերը հեղափոխության մեջ, էջ 1—4։
Քննադատում է տաճկական բռնակալությունը։

[1] Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն, 2-րդ մաս, էջ 145։

2. Մի բացատրություն (Հայրենասերների միությանն օգնելու, աջակցելու մասին), էջ 4—5։



3. Անվերնագիր. «Մի բացատրություն» հոդվածի հեղինակի և հայ հասարակության վերաբերմունքի մասին դեպի Հայրենասերների միությունը, էջ 5—6։

4. Անվերնագիր. Փոքրիկ ծանոթություն բանաստեղծ Ռ. Պատկանյանի մասին, էջ 6։

5. «Ազգային Երգում»—«Օրհնաս» (Ռ. Պատկանյանի արդեւլված ոտանավորներ), էջ 7։

6. Նվիրատվությունների ցուցակ, էջ 7։